Գրիգոր կաթուղիկոսին»*։ Մեծոփեցին ինքն էլ իւր Յիշատակարանի մէջ, մի քանի ձեռագիրների համեմատ**, յայտնում է. «Եւ ամ մի ի լման ի գուռն սուրբ Էջմիածնին դեգերեցայ աշակերտօք և վարդապետօք (ոմանք «աշակերտքն և վարդապետք») և վասն ասացեալ պատճառացս թողի և փախեայ»։ Այս խօսքերից պարզ է, որ Թովման երկու անգամ է եղել Էջմիածնում, մի տարի Կիրակոսի ընտրութիւնից անմիջապէս յետոյ, և ապա Կիրակոսի անկման ամիսներից մինչև Գրիգոր Մակուեցու առաջին ամիսները։ Կիրակոսի ընտրութիւնը կատարուեցաւ ՊՂ թուականի գարնանը, Հոգեգալստեան տօնից առաջ և տևեց երկու տարի։ (ՊՂ թուի մարտին կաթուղիկոսը դեռ ևս Գրիգոր Մուսաբէգեանն էր)***։ ՊՂԲ թուի գարնանը պէտք է սկսուած լինի ապստամբական շարժումը Կիրակոսի դէմ. գուցէ և հէնց այդ առթիւ Թովման Էջմիածին էր եկել երկրորդ անգամ, թէև նա հեռացել էր կաթուղիկոսի «կամապաշտութեան» և շրջապատողների «ագահութեան և գողութեան» պատճառով։ Յամենայն դէպս նա ներկայ էր, ինչպէս տեսանք, Կիրակոսի դէմ կատարուած դատավարութեան ժամանակ։

Թովմայի Մեծոփայ վանքը վերադարձի մասին անմիջական տեղեկութիւն չունինք. բայց ՊՂԳ թուականի սկզբներին պէտք է արդէն Էջմիածնից հեռացած լինէր։ Մենք լաւի իսկական նշանակութեամբ իրական չենք համարում Թովմայի միտարի մնալու լուրը Գրիգոր Մակուեցու օրով, որովհետև վերջինս էլ համարւում է Թովմայի աչքում իբրև մեղսակից Կիրակոսի աքսորման†։ ՊՂԴ (=1445) թուականից ունինք Մանկասարի որդի Յովհաննէս գրչի երկու յիշատակարան Թովմայի անուան յիշատակութեամբ՝ Մեծոփայ վանքում††։ Նորա մահը հանդիպեցաւ ՊՂԵ (1446) թուի, մայսի 15-ին, Մասեաց ստորոտի Արկուռի գիւղում, երևի քարոզութեան դուրս եկած ժամանակ, ինչպէս սովորութիւն ունէր երբեմն†††։ Թովմայի եղբայր Գաւրգի մելիք և աշակերտները մարմինը փոխադրեցին Մեծոփայ վանքը և թաղեցին նոյն վանքի նշանաւոր վարդապետների,

---

* Նոր Նիւթեր. Ար. 748. (11).

** Կոստանեանց. 88։ № 1712/1771. 276ա։ № 1706/1769. 425ա։ № 1697/1799. 431ա։ № 1705/1768. 540բ։

*** Կոստանեանց. 75. Կիրակոս Բանասէր Ար. 743. (11)։ Նստարք 125. 124. 128. 129. 131/2.

† Կոստանեանց. 79.

†† Նստարք 147/8. եւ մեր ժողովածուն. Զմիւռնիացի Սիմէոն Էֆենդի Տ. Գասնիկեանի աւետարանից։

††† Կիրակոս Բանասէր. Ար. 748—749. Համ. Ար. 757. (41/12. 20)։